

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Այս առաջին գլխի վրայ :

ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ :

— Երբ որ մարդս անօգուտ երևցած բան մը օգտակար կընէ, ան բանը բերք՝ կըսուի. զոր օրինակ ցորենը երբ որ կըցանես, կըբուսնի ու ալիւր կընես, կամ վաճառականութեամբ մէկ տեղէն մէկալը կըտանիս՝ բերք կըլլայ :

— Արեւմտեան վաճառականութիւնն ալ բերք կըբերէ :

— Մանք ըսին թէ վաճառականութիւնը բերք չբերէր, որովհետեւ արդէն գտնուած բերքերուն վրայ նոր բան մը չաւելցընէր : Բայց ուրիշները կըսեն թէ վաճառականութեան բերք բերելուն վրայ տարակոյս չկայ. վասն զի որչափ վաճառքներ կան որ մեզի հարկաւոր ըլլալով՝ օգտակար ու յարգի բաներ են մեր առջևը : Իսկէ կիմացուի որ վաճառքի վրայ դրուած տուրքերն ալ իրաւացի են :

— Ա՛յ վաճառականութիւնը երբեմն բերքը կընայ կորսուիլ թէ չէ :

— Երբեմն վաճառականը յարգեալ օգտակարութիւն ունեցող բանը կըփձացընէ. օրինակի համար, լսելով թէ հնդկաստան բալիւր չկայ, միտքը կըգնէ թէ ինքը՝ ղնտրայէն հոն բալիւր տանի նէ՝ մեծ վաստակ պիտի ընէ. ասանկով ղնտրային մէջ օգտակար եղած բանը հնդկաստան տանելով կըփձացընէ :

— Արհեստաւորը բերք կըբերէ՞ թէ չէ :

— Ա՛յր եւ իցէ արհեստաւոր բերք կըրնայ բերել՝ քանի որ խոհեմութեամբ բանեցընէ իր արհեստը. բայց շատ

անգամ արհեստաւորը իր շինած բանին յարգը կորսնցընելով՝ բերք չբերէր, որով վաստակ ալ չըներ. զոր օրինակ մէկը գիրք մը կըտպէ, թուղթը ազնիւ, գիրը մաքուր տիպը գեղեցիկ, և սակայն թէ որ գրքին նիւթը կամ գրուածքին ոճը աղէկ չէ, տպողին աշխատանքը և ծախքը փուճ է, և բերք բերելու տեղ՝ որչափ բան փձացուցած կըլլայ, հակա՛մը թուղթը որ ճերմակ եղած ատենը տասնըհինգ դահեկան կարժէր, տպուելէն ետքը հազիւ վեց դահեկան կընէ. նմանապէս գործաւորներուն առած ստակը, և տպողին աշխատանքը փուճը գնացած է :

— Բայց կընայ ըլլալ որ բերքի մը կամ վաճառքի մը յարգը բոլորովին փձանայ :

— Եթ բանը խիստ դժուար կըպատահի. վասն զի սովորաբար որ և իցէ աշխատանք մէկ օգուտ մը կըբերէ : Դնենք թէ մէկը վաճառք տարէր է մէկ երկիր մը որ հոն խիստ շատ կայ. բոլորն ալ կորսնցընելու տեղը՝ աւելի յանձն կառնէ ցած գնով ծախելու. ասով թէպէտ մէկ հոգի մը կորուստ կընէ, բայց քանի մը հոգի ալ աժառն բան գնելով վաստակ կընեն : Ի՛նչպէս չկրնար ըսուիլ թէ ուրեմն երբ որ մէկը կըկորսնցընէ ու մէկալը կըշահի, հաւասար են, ու ոչ կորուստ կըլլայ՝ ոչ շահ : Ա՛յսն զի մէկ կողմին վաստակը խիստ պզտիկ, ու մէկալին փաստը խիստ մեծ է :

Երբ որ մէկը հեռաւոր ու անստոյգ յուսով անխոհեմ վաճառականութիւն մը ձեռք կըզարնէ, և մանաւանդ երբ որ այսպիսի անխոհեմ ու տգէտ վաճառականները կըշատնան, քիչ ատենի մէջ շատ գործարաններ կըգոցուին, շատ վաճառականութիւններ կըթուլնան, շատ գործաւորներ կաղքատնան, ու ժողովուրդը կըմնայ առանց աշխատանքի ու առանց վաստակ ընելու : Այսպիսի փաստներու

առջև՝ քանի մը հոգւոյ աժան աժան բան գնելով վաստակ ընելը ինչ օգուտ :

— Ուրեմն ինչ ընելու է որ մարդուս աշխատանքը, արհեստն ու վաճառականութիւնը օգտակար ըլլայ :

— Ամէն բանէն առաջ արհեստաւորը կամ վաճառականը խիստ պիտի ըզգուշանայ երազի նման մեծ մեծ երեւակայութիւններէն, ու պիտի ջանայ որ ստոյգ ու հաստատուն տեղեկութիւններ առնու իր և իցէ բանի և իր և իցէ մարդու վրայ՝ որոնց հետն որ բան գործ պիտի ունենայ : Այս զգուշութիւնները չընելով՝ որչափ մարդիկ իրենց հարստութիւնն ու երջանկութիւնը կորսնցուցած են ամէն ժամանակ, և մանաւանդ մեր օրերը : Որչափ մարդիկ կան որ կամ խաբէ՝ բայ օտարականներու մեծախօսութիւններուն հաւատալով, կամ թէ իրենք չորս ամսուան մէջ անբաւ հարստութիւն գիշելու յուսով՝ իրենց կարողութենէն վեր բաներու ձեռք կը զարնեն, և քիչ ատենէն ուրիշներուն առջև ծաղր կը լլան, և իրենք խեղճութեան մէջ կը մնան : Այսպիսիները շատ անգամ դատարկասէր, թեթեամիտ, ու միայն իրենց շահը մտածող մարդիկ են . անոր համար առանց մեծ աշխատանքի, առանց խորունկ մտածելու, և առանց արդարութեան պարտքերուն ուշ գնելու, կոյր զկուրայն մեծա մեծ բաներու մէջ կը մտնեն, կը խրրին կը մնան, և թէ որ մէկը ձեռքերնէն բռնէ ու գուրս հանել ուզէ՝ անիկայ ալ իրենց հետ կը խրրեցնեն : Աշխատասէր ես . արհեստիդ՝ վաճառականութեանդ հարկաւոր գիտելիքներուն տեղեակ ես . գործունեայ կերպով ջանա՛ աշխատէ, անտարակոյս մեծ վաստակ կընես : Թէ որ ժամանակիդ պարագաները յաջող չեն ըլլար, պիտի նայիս որ գործաւորանիդ բերքերը աւելի լաւ կերպով կամ աւելի աժան կերպով ելլեն . նոր նոր գուներ պէտք է բանաս, նոր տե-

սակ աշխատանքներու պէտք է ձեռք զարնես : Որչափ որ արդելքներդ շատ են, այնչափ ալ գործունէութիւնդ աւելի պիտի ըլլայ :

— Ինչ կընշանակէ ան խօսքը որ տընտեսական գիտութեան մէջ վճիռ մը դարձած է, թէ Ռեբբը բերքով կը գնուի :

— Սիկայ մէկ ճշմարտութիւն մըն է որ վեր 'ի վերոյ մտածողին մոլութիւննայ . բայց լաւ հասկըցողը կիմանայ որ տնտեսական գիտութեան հիմը աս է : () գտակար ու հաճոյական բարիքները ձեռք ձգելու համար մէկ հատիկ յարմար միջոց փոխոցն ' է . և ահա աս փոխոց ընելը կըսուի մէկ բերքով մէկալը գնել : Վսեմք թէ մէկը հարուստ է, ու իր երկիրներուն եկամուտովը ² միայն կապրի հանգիստ . իրաւ է որ ինքը բերք մը չբերեր, բայց ուրիշները կը բերեն իրեն համար . վասն զի ինչ է իր եկամուտը, բայց եթէ իր երկիրը բանեցընողներուն բերքին մէկ կտորը : Այս կտորը կրնայ նիւթական կերպով առնել . այսինքն երկրին բերած բերքը առնել . բայց աւելի դիւրութեան համար՝ անոր տեղը ստակ կառնէ . ըսել է թէ բերքը ստրկի հետ կը փոխէ . և որովհետեւ իրեն ուրիշ բաներ հարկաւոր են՝ թէ ապրուստի և թէ գործածութեան համար, ան ստակն ալ այնպիսի բաներու հետ կը փոխէ : Վսեմք թէ դու ան մարդիկներէն ես որ շատ ստրկի տէր են, ու իրենց ըստակը շահի դրած՝ ան շահովը կապրին : Թէ որ ստակդ գործարան ³ ունեցող մարդու մը քով է, ան շահն որ կուտայ քեզի քու ստրկիդ համար՝ անոր շինած ու ծախած բաներուն մէկ մասն է :

— Թէ որ ամէն վաստակ փոխոցով կը լլայ, կամ թէ ամէն բերք ուրիշ բերքով մը կը գնուի, հապա դատաւորները, բժիշկները, փաստաբանները, և ասոնց նման մտաւոր աշխա-

1 Տե՛ղի :

2 Կէլիք :

3 Բերիտի :

տանքի տէր մարդիկը ինչ բերք կուտան մարդուս որ անոր տեղը ուրիշ բերք առնեն իրաւացի կերպով :

— Եւսպիսիները իրենց աշխատանքովը կը գնեն ուրիշին վաստակը . վասն զի ինչպէս որ մեր ամէն պիտոյքը նիւթական չեն , այսպէս ալ ամէն բերք նիւթական պէտք չէ ըլլայ : Հասարակաց հանգստութեանը և խաղաղութեանը վրայ հոգ ունեցողին աշխատանքը , նմանապէս ուրիշներուն առողջութեանը և զբօսանքին ուշ դնողին ջանքը՝ նիւթական բերքեր չեն , բայց մեզի խիստ հարկաւոր ու օգտակար են . ուրեմն մենք իրենց մտաւոր բերքին տեղը պարտական ենք նիւթականը տալու , որպէս զի իրենք ալ անով իրենց ապրուստն ու հանգըստութիւնը գտնեն :

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Նաոտերը ուժով յընելու և պաշտօնէր ընելու հնարք :

ԳԱՂԱՅԻՔԻ քանի մը գաւառներուն մէջ հին ու անպտուղ ծառերը ասանկ կը դարմանեն : Եւնան ժամանակ պարտիզպանը սուր ու տափակ դանակով մը ծառին բունին ու խոշոր ճիւղերուն վրայի ճաթըռտած ու ճեղքուած կեղևներուն առջի կարգը բոլոր կըսրկորէ ու կը վերցընէ , անանկ որ ծառին բունը վերէն վար մերկ կերևնայ . ետքը տակի կեղևը շուտով մը կը հաստընայ ու նորէն բոլոր ծառը կեղև կը կապէ : Եւ հնարքին մէկ աղէկութիւնն ալ ան է , որ կեղևին մէջտեղը որչափ որ ճաթի ու որդ կայ՝ բոլորն ալ կը թափին :

Եւստիան շաքարով հասցընելու հնարք :

ԽՈՒՆԱՒ ու ցած երկիրներու մէջ լուբիան՝ խիստ դժուար կը հաստուն

1 Գոտուկ :

նայ . անոր ճարը աս է . երբոր կընայիս որ կեղևնին լեցուեր է , մէջի հատերն ալ սովորականին չափ մեծցեր են , արմատովը հողուն մէջէն հանէ , ճիւղերը պզտի խեղանքերու վրայ կապէ ու թող . միայն նայէ որ արմատնին գետին դպած ըլլայ՝ առանց հողուն մէջ թաղուելու . և աս գործողութիւնս արեւոտ տեղ մը ըրէ : Աւթօրուան մէջ տերեւները կը թուովն ու կը թափին , լուբիաներն ալ կը ձեւաւորուին ու կը չորնան : Եւ գործողութիւնս չոր ու տաք տարիներն ալ կըրնաս ընել , որովհետեւ օգտակար է . մէյմը որ աս կերպով գէթ իրեք շաբաթ առաջ կը հաստընայ լուբիան ու աւելի մատղաշ ու համով կը ըլլայ . երկրորդ որ իրեք շաբաթ առաջ կըրնաս երկիրդ մաքրել , որ աշնան վար ուցանին համար շատ օգտակար է . որովհետեւ որչափ երկիրդ շուտով մաքրես՝ այնչափ ալ աշնան ցանելիքներդ շուտով կընաս ցանել , որով շուտ ալ կը բուսնին :

ՏՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Եւստիանի Կայէնընելու հնարք :

Եւ 2 ունկի գինիի մոխիր¹ , 2 ունկի սպիտակադեղ² , 1 ունկի պաղլեղ³ . աս իրեք նիւթն ալ ծեծէ ու քիչ մը ջրով իրարու հետ շաղուէ , ու կակուղ լաթ մը ան բաղադրութեան մէջ թաթխելով՝ արծաթեղէնը շփէ , նոր արծաթի պէս կը փայլի : Արջը պարզ ջրով լուա ու ցամքեցուր : Այն որ արծաթեղէնը խորտուբորտ տեղուանք ունի , լաթի տեղ վրձին⁴ կընաս գործածել :

1 Գրեմարի :

2 Իսպիտակ :

3 Եւս :

4 Փըլ :